ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-6

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 05.12.2018թ. N 397/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.01.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մուրադյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գևորգյանը, Գ.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Գնահատող հանձնաժողովի աշխատանքները վերսկսելու և հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործունեությունը ժամանակավորապես կասեցրել էր և 21.01.2019թ. թիվ-1/18-2/3590-19 գրությամբ /կցվում է/ դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզաբանման նպատակով արդյոք «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի տեխնիկական անսարքության հետևանքով չի կարողացել ներբեռնել շտկման ենթակա փաստաթղթերը և եթե տեխնիկական անսարքության հետևանքով կազմակերպությունը չի կարողացել ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը կարող է գրությամբ ներկայացված փաստաթղթերը հիմք ընդունել: ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանել է 25.01.2019թ. թիվ-26-1/942-19 գրությամբ/ գրությունը կցվում է/: Գնահատող հանձնաժողովը վերսկսեց աշխատանքները:

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մուրադյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝

-առաջին տեղը զբաղեցրած «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին ճանաչել ընտրված մասնակից:

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

-Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մուրադյան

Անդամներ՝ Ա.Գևորգյան

Գ.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան